

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Երևան

Հոկտեմբեր 2015 թ.


Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը և Հայ օգնության միությունը (ՀՕՍ)՝ կարևորելով Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումը, Հայրենիք-Սփյուռք գործակցությունում մշակութային, կրթական, սոցիալական, առողջապահական և քարոզչական ծրագրերի իրականացումը, կնքեցին համագործակցության հուշագիր հետևյալի մասին.

1. Մշակել և համատեղ իրականացնել սոցիալական, կրթական ծրագրեր Հայաստանի Հանրապետությունում, Արցախում և Սփյուռքում:
2. Համատեղ իրականացնել սոցիալական ծրագրեր՝ ճգնաժամի հետևանքով Հայաստանում գտնվող երեխաներին և նրանց ընտանիքներին աջակցելու նպատակով:
3. Նոր թափ հաղորդել «Լավագույն ուսուցիչ» և «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխություններին, արժևորել հայ ուսուցչի գործունեությունը, հատկապես Սփյուռքում: Խրախուսել այն մանկավարժներին, որոնք Սփյուռքում դասավանդում են հայագիտական առարկաներ և այն ուսանողներին, որոնք մասնագիտանում են հայագիտության մեջ:
4. Մշակել և իրականացնել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը նվիրված ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ ծրագրեր:
5. Կողմերից որևէ մեկի առաջարկած համագործակցության յուրաքանչյուր ծրագիր, ձեռնարկ քննարկել և իրականացնելուց առաջ ստանալ մյուս կողմի սկզբունքային համաձայնությունը:

6. Սույն համագործակցության հուշագիրը կազմված է երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ:
7. Սույն համագործակցության հուշագրում ցանկացած լրացում կամ փոփոխություն կատարվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ և ձևակերպվում առանձին արձանագրության տեսքով, որը կազմում է սույն համագործակցության հուշագրի անբաժանելի մասը:
8. Սույն համագործակցության հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒԻՔԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՐՅԱՆ



ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏՈՒՀԻ

ՎԻԳԻ ՄԱՐԱՇԷՅԱՆ

